ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԼԵՎՈՆ ՎԱՐԴԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը հետևյալ ցավակցական հեռագիրն է հղել լիբանանահայ գրող և պատմաբան Լևոն Վարդանի ընտանիքին՝ նրա մահվան կապակցությամբ։

«Սրտի խոր վշտով իմացանք Լևոն Վարդանի մահուան անակնկալ լուրը։

Բարձրօրէն կը գնահատենք իր գրողի տաղանդը, գրական, ուսուցչական, հայագիտական, պատմագիտական վաստակը։ Մեր արդի պատմութեան առարկայական ուսումնասիրութեան գործին մէջ, յատկապէս ցեղասպանութեան, հայկական դատի և Կիլիկիոյ պատմութեան մարզերուն մէջ կարևոր ներդրումներ կատարեց առաւել յստակ և ամբողջական ձևով ըմբռնելու համար մեր անմիջական անցեալի հետ կապուած ճակատագրական դեպքերը և իրողական կացութիւնները։ Իր մահով իսկական կորուստ մը արձանագրած կ'ըլլանք։ Իսկ իր կեանքով և գործով մեծ բարիք մը ողջունած կ'ըլլանք մեր գրականութեան զարգացման նոր սերունդի դաստիարակութեան և նոր ժամանակներու պատմութեան հասկացման բնագաւառներուն մէջ։

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին պիտի աղօթենք իր հոգւոյ խաղաղութեան համար հոգեհանգստեան արարողութեամբ։

Մեր ցաւակցութիւնները իր ընտանիքի բոլոր անդամներուն, որոնց համար միշտ բացառիկ սէր և նուիրում ունէր և նոյն սէրն ու նուիրումը կը վայելէր բոլորէն։ Մեր վշտակցութիւնը նաև իր գրչակից բոլոր եղբայրներուն և քոյրերուն։

Թող Բարձրեալն Աստուած նոր Լևոն Վարդաններ ծնցնէ մեր նոր սերունդի շարքերուն մէջ։

Վշտակցութեամբ, սիրոյ ողջունիս և օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ